ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՐԲԵՐԴՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

1810թ. ԱՄՆ հիմնվում է Արտաքին Առաքելությունների Համամիսիոներական Ամերիկյան Խորհուրդը[1].(այսուհետև Խորհուրդ - Ս.Փ.) (American Board of Commissioners for Foreign Missions), որի նպատակն էր բողոքականությունը տարածել ամբողջ աշխարհում: 1820 - ական թվականներին ամերիկացի միսիոներները ի թիվս այլ երկրների հաստատվեցին նաև Օսմանյան կայսրությունում: 1831թ. ամերիկացի միսիոներ Վիլիամ Գուդելը հաստատվեց Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսում: Նրա հիմնական նպատակն էր բողոքականությունը տարածել հայերի շրջանում: 1846թ. Կ.Պոլսում հիմնվեց առաջին բողոքական եկեղեցին:

1847թ. նոյեմբերի 15-ին սուլթանական հրովարտակով Օսմանյան Թուրքիան կայսրությունում բնակվող բողոքականներին ճանաչեց որպես առանձին կրոնական համայնք: 1850թ. նոյեմբերի 27-ի հրովարտակով, բողոքականները իրավունք ստացան ընտրելու իրենց ազգապետը: Վերը նշված հրովարտակները լայն իրավունքներ տվեցին ամերիկյան միսիոներներին կայսրությունում գործելու համար:

Խարբերդի միսիոներական կայանի հիմնադիրն է Ջորջ Դանմորը, որը 1852թ. այցելեց քաղաք և հաստատվեց այստեղ: Քաղաքի առաջին բողոքականները լինում են միսիոների վառոցաց սենյակի տերը և տեր Գասպար քահանայի որդին Մարտիրոս Գասպարյանը: Այնուհետև նրանց շարքերն են համալրում Գևորգ Թաշճյանը, նրա եղբայրը Տեմուրճի Դավիթը, Փապուճի Հովհաննեսը, Ուստա Բաղդասարյանը[2]:

Միսիոներների գործունեությունը չէր նպաստում տեղի հայության միավորմանը: Նրանք չէին ընդունվում հայ հասարակության կողմից և հալածվում էին: Դրա հետևանքով նույնիսկ ընտանիքներն էին բաժանվում և նույն տան անդամները դառնում էին անհաշտ հակառակորդներ:

Ամերիկացի միսիոները քարոզներ էր կարդում ինչպես հայ առաքելականների, այնպես էլ մահմեդականների շրջանում: Մահմեդական հոգևորականությունը հանդուրժում էր Ջ. Դանմորի միսիոներական գործունեությունը, որովհետև այդ ժամանակ ընթանում էր 1853-1856թթ. ռուս-թուրքական պատե-

---

[1] Արևմտահայ մամուլում ընդունված է այս կազմակերպությանը անվանել «Ամերիկյան Պորտ Ընկերություն»

[2] Ճիզմէճյան Մ., Խարբերդը եւ իր զավակները, Ֆրեզնո Քալիֆորնիա1955, էջ 105-106:

ռազմը: Սակայն նրանք դրդում էին մահմեդական երիտասարդությանը հարձակվել Դանմորի դպրոցի և այնտեղ սովորող հայ ուսանողների վրա: Դանմորը իմանալով այդ մասին, անմիջապես նամակ է գրում թուրք քաղաքապետին և պահանջում է պատժել չարագործներին:

1858թ. վերջում Զ. Դանմորին միացան ևս երկու միսիոներ Վելերը և Ալենը[3]: 1859թ. Վելերին և Ալենին միացավ Բարնը: Խարբերդը հանդիսանում էր մոտ 100.000 բնակչություն ունեցող վիլայեթի կենտրոնն էր[4]:

1859թ. Խարբերդում բացվում է Աստվածաբանական վարժարան, որի ղեկավարությունը ստանձնեց Ալենը[5]:

1863թ. վերջերին Խարբերդի Աստվածաբանական վարժարանը ավարտեցին առաջին 18 շրջանավարտները: Նրանցից 8-ը ունեին Աստծո խոսքի տարածման և քարոզման վկայականներ, իսկ մյուսները գյուղերում սկսեցին աշխատել որպես ուսուցիչ: Նրանցից մի քանիսը շուտով ձեռնադրվեցին քահանա[6]:

1861թ. մայիսին Խարբերդում տեղի ունեցավ Հյուսիսային հայկական միսիոներության ժողով: Վերջինս որոշեց Խարբերդում հիմնել աղջիկների վարժարան[7]:

Աղջիկների գիշերօթիկ-դպրոցը բացվեց 1862թ.: Վարժարանում տրվում էր արդիական դաստիարակություն, մասնավորապես դասավանդում էին թվաբանություն, աշխարհագրություն, հայերեն, կրոնի պատմություն և այլն: Շրջանավարտներին ուղարկում էին շրջակա գյուղեր և քաղաքներ, որտեղ ժողովարաններին կից բացված նախակրթարաններում դասավանդում էին տարբեր առարկաներ[8]:

Հարկավ, ամերիկյան միսիոներների բուռն գործունեությունը մարդորսությունը, ժողովարանների, ուսումնական զանազան հաստատությունների հիմնումն առաջացնում էր տեղի հայ բնակչության, մասնավորապես առաքելական հոգևորականության դիմադրությունը և ի հակակշիռ ամերիկացիների, առաքելական եկեղեցիներին կից նույնպես սկսեցին հիմնվել ազգային կրթօջախներ: Այդ շրջանի միսիոներական երկսեռ դպրոցների մեջ սովորեցնում էին թվաբանություն, աշխարհագրություն, գրաբար քերականություն, մարդա-

---

[3] «Աւետաբեր», Հատոր 4, Կ.Պոլիս 1907, Յունուար 5, թիվ 1, էջ 13:
[4] Anderson R., History of the Missions of ABCFM to the Oriental Churches, 2 vols, Boston 1872, vo2, էջ 51:
[5] Ատանալեան Կ. Պ., Յուշարձան Հայ Աւետարանական եւ աւետարանական եկեղեցիոյ, Frezno, California 1952թ, էջ 372:
[6] Anderson R., History of the missions of ABCFM to the Oriental Churches, 2 vols, Boston 1872, vol 2, էջ 246:
[7] Stone F. A.., The life and death of Armenia or Euphrates college, Harpoot.«Armenian Review», Vol. 30 N 2(118) Boston 1977, էջ 152:
[8] Ճիզմէճյան Մ., Խարբերդը եւ իր զավակները, Ֆրեզնո, Քալիֆորնիա 1955,էջ 134:

կազմություն, Նոր Կտակարան, Հավաքումն վկայության և Ս. Գրքի ներածություն, ընդհանուր պատմություն, թուրքերեն և անգլերեն: Մի քանի տարի բարձրագույն ուսումնական հաստատության պահանջարկ առաջացավ, իսկ այդ պահանջում էր մեծ ծախսեր: Այդ խնդիրը լուծելու համար 1875թ. Վելերը և իր կինը, գումար հայթայթելու նպատակով մեկնում են ԱՄՆ: Նա հավաքում է շուրջ 141.000 դոլար, որին Ամերիկայի հայերը ավելացնում են 40.000 դոլար: Ամբողջ գումարը Վելերը հանձնում է «Թրասթ» հիմնադրամին, որը 1878թ. մայիսի 13-ին գրանցվում է Մասաչուսեթս նահանգում և կոչվում է «Trustees of Armenia College Funds»: Հիմնադրամն ուներ նաև իր կանոնադրությունը: Նրա 8-րդ հոդվածի համաձայն մինչև 1925 թվականը խնամակալները պետք է լինեին բացառապես ամերիկացիներ, իսկ այնուհետև խնամակալության գործադիր մարմինը պետք է հանձնվեր տեղացիներին՝ հայերին[9]:

1878թ. նոյեմբերին Վելերը վերադառնում է Խարբերդ: Այդ նույն տարում հիմնվում է «Արմենիա» քոլեջը: Աստվածաբանական վարժարանից 34 նախապատրաստական աշակերտներ են ընտրվում, որպեսզի կազմվի քոլեջի չորս կարգերը[10]:

Քոլեջի կրթական մշակներն էին պրոֆեսոր Մ. Ա. Մելքոնը, Հարություն Ավագյանը, Գ.Մ. Շմավոնյանը և Հարություն Էնֆիեճյանը: Քոլեջում դասավանդվող առարկաներն էին կրոնագիտություն (Ս. Գրքի ընթերցանություն շաբաթը երկու անգամ), հայերեն գրաբար և աշխարհաբար, քերականություն, թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն, հաշվողական գիտություններ (թվաբանություն, երկրաչափություն, եռանկյունաչափություն, տոմարակալություն), բնական և բնագիտական գիտություններ, ընդհանուր ազգերի պատմություն, հայոց և օսմանյան պատմություն, փիլիսոփայական գիտություններ, գծագրություն, երաժշտություն, աղջիկների համար ձեռագործություն և տնային աշխատանքներ[11]:

Ամերիկացի միսիոներներ Վելերը, տիկին Ալենը, Հարբորդ Ալենը, դոկտոր Բարթնը, Օ. Փ. Ալենը, Բրաունը սովորեցնում էին աշակերտներին Շեքսպիրի, Միլթնի, Թենիսնի, Էմերսոնի, Լոնգֆելոյի և այլոց աշխատությունները: Անգլերեն լեզուն և գրականությունը գերիշխող էր:

Քոլեջի գրադարանն ուներ շուրջ 8000 անուն գիրք, որից 1500 հայերեն: Մեծ տեղ էր տրվում նաև սպորտին: Կային ֆուտբոլի և բասկետբոլի

---

[9] Չորմիսյան Լ., Համապատկեր Արևմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա հատոր (1850-1878), Պէյրութ 1972, էջ 512:

[10] Ավագյան Ջ.Ռ.,Հայերի գաղթը Ամերիկայի Միացյալ Նահանգներ, «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան 1996, N 1, էջ 95:

[11] Ճիզմեճյան Մ., Խարբերդը եւ իր զավակները, Ֆրեզնո, Քալիֆորնիա 1955, էջ 130:

խմբեր: Քոլեջն ուներ նաև իր արհեստանոցը[12]:

Վելերը աղքատ ուսանողների մեջ կրթությունը խթանելու նպատակով ձեռնարկում է հետևյալ միջոցները. Աղքատ կամ անկարող ուսանողների համար ստեղծում է պարտամուրհակների համակարգ, որը ուսանողը վերադարձնում էր քոլեջ ավարտելուց հետո երկու տարվա ընթացքում[13]: Ամեն տարի քոլեջը ավարտած ուսանողները ուղարկվում էին վարժապետության շրջակա քաղաքները: Ուսանողներից շատերը դասավանդում էին նաև կաթոլիկների և առաքելականների երկսեռ դպրոցներում: Ինչպես նկատել է մի միսիոներ, այդ անփորձ աշակերտ-երիտասարդները ուղարկվում էին մի երկու տարի վարժապետության, որի արդյունքում նրանք վերադառնում էին գումար վաստակած և ամենակարևորը մեծ փորձ ձեռք բերած:

Ամերիկացի միսիոներները շատ մեծ տեղ էին տալիս ձեռներեցությանը, որի շնորհիվ Թուրքիայի հիմնական բողոքական համայնքերը դարձան ինքնաֆինանսավորվող: Շուտով ամերիկյան կրթական հաստատություններում սովորած պատվելիների թիվը շատացավ և բոլորը չէին, որ կարողանում էին գտնել աշխատանք: Եվ արդեն 1895թ. սկսած ամերիկացի միսիոներները հայերին ուսանում էին տնտեսագիտության հիմունքներ, որը նրանց հնարավորություն կտար զբաղվել անհատական ձեռներեցությամբ: «Արմենիա» քոլեջը մոտավորապես 600-ից ավելի շրջանավարտներ էր տվել, որոնցից մեծ մասը աշխատանքի անցան տարբեր բնագավառներում, ինչպես օրինակ, բժշկության, դեղագործության, վաճառականության կամ դարձան պետական պաշտոնյա:

Ինչպես արդեն նշեցինք, Թուրքիայում, երբ միսիոներները մուտք գործեցին, չկար բարձր մշակույթ, գրականություն, գյուղատնտեսություն և հանքագործություն, չկար նաև հողի արդյունաբերություն: Մի հայ Ամերիկայից բերել էր երկաթագործության մեքենաներ, բայց թուրքական կառավարությունը թույլ չէր տվել նրան աշխատելու: Այդ պատճառով էլ շատ հայ շրջանավարտներ թողնում էին իրենց հայրենիքը և մեկնում էին Ամերիկա, որտեղ արդեն ձևավորվել էր հայկական գաղութը:

Միսիոներները նույն եռանդով ու թափով գործունեություն ծավալեցին աղջիկների կրթության գործում, նպատակ ունենալով պատրաստել կիրթ երեցկիններ, որոնք պետք է գործեին քարոզիչների հետ միասին: Այն գյուղերի և հեռավոր քաղաքների աղջիկները, որոնք ցանկանում էին բարձրագույն կրթություն ստանալ գալիս էին քոլեջի գիշերօթիկ: 1880թ. բացվեց «Եփրատ» քոլեջի աղջիկների ճյուղը: Այդ տարի արդեն սովորում էին 24 հոգի, որոնք ապրում էին գիշերօթիկում, նրանք հիմնականում եկել էին Տիգրանակերտից,

---

[12] Չորմիսյան Լ., Համապատկեր Արևմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա հատոր (1850-1878), Պէյրութ 1972, էջ 513:

[13] Պալապանեան Ս., (Պալապան Խուճա), Կեանքիս տաք ու պաղ օրերը (Այնթապ-Քեսապ-Հալեպ), Հալեպ, էջ 39:

Արաբկիրից, Ակնից, Բալուից, Հյուսեյնիկից և այլ քաղաքներից: Աշակերտների մեծը մասը քարոզիչների և քահանաների աղջիկներ էին[14]:

«Եփրատ» քոլեջի աղջիկների մասնաճյուղն ուներ իր առանձին հարկաբաժինը, բոլոր հարմարություններով: Արդեն 1883թ. տալիս է իր առաջին յոթ շրջանավարտները: Նրանցից մի քանիսը մնացին վարժարանում իբրև ուսուցչուհիներ: Աղջիկների վարժարանը ղեկավարում էր տիկին Վելերը, սակայն երբ նկատվեց աշակերտների ավելի մեծ հոսք, Ամերիկայից ժամանում է օրիորդ Մերի Դենիելսը, որը պաշտոնավարում է շուրջ 29 տարի: Վարժարանում դասավանդում էին նաև տղաների վարժարանի դասախոսները:

Ամերիկացի միսիոներ Վելերը Խարբերդում քոլեջ հիմնադրելու ժամանակ բերել էր նաև մի փոքրիկ տպարան, որպեսզի տպագրեն դասագրքեր, ընթերցարաններ, կրոնական և այլ տիպի գրքեր: Այդ տպարանում տպագրվում է հայերեն առաջին աշխարհաբար քերականությունը, որի հեղինակն էր պրոֆեսոր Հովհաննես Կարապետյանը: Տպարանում հիմնականում աշխատում էին քոլեջի ուսանողները[15]:

«Եփրատ» քոլեջի շենքերը կազմում էին մի ամբողջ թաղամաս և ունեին 18 մասնաշենքեր: Քոլեջն ուներ մեծ սրահ, որը կոչվում էր «Վելերի Սրահ», որտեղ տեղավորվում էին ավելի քան 1500 հոգի: Ինչպես նաև կար մեծ ժողովարան: Կար բողոքական եկեղեցի[16]:

Քոլեջի գործունեությունը գտնվում էր օսմանյան իշխանությունների աչալուրջ հսկողության ներքո: Հավանաբար, իշխանությունների ցուցումով քոլեջ այցելած թուրք զինվորականները ներկա եղան մարմնամարզության դասին: Նրանց ուշադրությունը գրավեց 4 ոտնաչափ երկարությամբ փայտե ձողը, որով աշակերտները զանազան վարժություններ էին անում: Զինվորականները վերցրեցին այդ փայտե ձողերից մեկը, ուսումնասիրեցին և այնուհետև հեռացան: Մի քանի օր անց քոլեջի ղեկավարությանը տեղեկացրին, որ վալին արգելել է այդ փայտե գործիքներով մարմնամարզություն անել, և այդ փայտե ձողերը պետք է անհապաղ Մեզիրե ուղարկել: Քիչ ավելի ուշ փակեցին նաև քոլեջի տպարանն ու մամուլը:

1888թ. Քոլեջն անվանափոխվեց[17]: Եվ բոլոր այն ուսանողների ավարտական վկայականներում որոնցում գրված էր «Արմենիա քոլեջ» կանչվեցին Մեզիրե և փոխեցին վկայականները «Եփրատ քոլեջի»: Այդ փոփոխությունների հետ նաև արգելվեցին այն բոլոր դասագրքերը, որոնց մեջ կար հայ, գենք, դանակ, սուր, պատերազմ և նման բառեր: Առգրավեցին բոլոր հայոց պատ-

---

[14] Ճիզմեճյան Մ., Խարբերդը եւ իր զավակները, Ֆրեզնո, Քալիֆորնիա 1955, էջ 134:
[15] Barton J., L. D.D., Daybreak In Turkey, Boston 1908., էջ 201:
[16] Վահե Հ., Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը, Նյու Յորք 1959, էջ 331-332:
[17] Չորմիսյան Լ.., Համապատկեր Արևմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա հատոր (1850-1878), Պէյրութ 1972, էջ 512:

մության, Եղիշեի, Եզնիկ Կողբացու և նմանատիպ դասագրքերը: Անգլերեն լեզվով գրված դասագրքերի մեջ գտնված Armenia, Armenians և նմանատիպ բառերի վրա սև գծեր քաշել տվեցին: Սրբագրեցին նաև քիմիայի դասագրքերը, մասնավորապես սև գծեր քաշեցին «SH_2O»-ի վրա կարծելով թե այն նշանակում է սուլթան Համիդ երկրորդը զրո է: Օսմանյան սահմանադրությունից հետո միայն կարողացան հրատարկել մամուլը և «Եփրատ Կիսամսեայ Հանդեսը», որի խմբագիրն էր Կ. Մ. Սողիկյանը:

«Եփրատ» քոլեջի նախագահներ են եղել՝ Քրոսբի Վելերը (1878-1893), Ջեյմս Բարթը (1893-1895, բայց հիմնականում նախագահի պարտականությունները դրված էին Բարնմի վրա, որպես տեղապահ), Բարնմը (1893-1895) և (1902-1903), Քեյցը (1896-1901), Հենրի Ռիկսը (1903-1910), Ըրնսթ Ռիկսը (1910-1915)[18]:

Բոլորը մեծ անհամբերությամբ սպասում էին 1925թ., երբ Եփրատ քոլեջի կառավարումը կհանձնվեր հայերին, սակայն չարաբաստիկ 1915-ին ամեն ինչ ավերվեց, դրանց թվում նաև Եփրատ քոլեջի շենքերը, իրենց բնօրրաններից քշվեց և կոտորվեց հայ ժողովուրդի մեծ մասը: Եփրատ քոլեջի ավերումից հետո ամերիկացիների կողմից որոշում կայացվեց քոլեջի հիմնադրամը կազմող 181.000 դոլարը օգտագործել տեղահանված հայերի կրթության համար, մասնավորապես Հալեպի քոլեջի, Աթենքի աղջիկների վարժարանի և Անատոլիա քոլեջում, որոնց հիմնական ուսանողությունը հայեր էին[19]:

Խարբերդի աղջիկների գիշերօթիկ դպրոցում սովորում էին 42 աշակերտ: Օրիորդներ Վեստը և Ֆրիթչերը Մարզվանից մի ժամանակ շատ կապված էին այս դպրոցի հետ, պատճառը օրիորդ Բաբքոքի վերադարձն էր Միացյալ Նահանգներ: Այժմ այս դպրոցը գտնվում էր օրիորդ Կլարիսա Պոնդի խնամակալության տակ: Արևելյան միսիոներությունը շատ մեծ տեղ էր տալիս կրթական գործին, մասնավորապես կանանց համար: Ծնողները որոնք մի քանի տարի առաջ գտնում էին, որ հարկավոր չէ, որպեսզի իրենց աղջիկը կրթություն ստանա և շատ դժվարությամբ էին թույլատրում իրենց աղջիկներին հաճախել դպրոց, այժմ մեծ սիրով վճարում էին իրենց աղջիկների ուսման համար:

Արդեն 1877թ. Խարբերդի հայ ավետարանականների միությունը ուներ 22 փոքրիկ եկեղեցիներ և 30 քահանաներ[20]:

Ստորև ներկայացնում ենք Խարբերդի Աստվածաբանական վարժարանի դասավանդվող հիմնական առարկաները.

1860թ. Յուսիսային հայկական միսիոներության ամենամյա հանդիպումը տեղի ունեցավ Խարբերդում: Այս ամենամյա հանդիպման ժամանակ

---

[18] Վահե Հ., Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը , Նյու Յորք 1959, էջ 330:
[19] Վահե Հ., Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը , Նյու Յորք 1959, էջ 329:
[20] Stone F. A. , The life and death of Armenia or Euphrates college, Harpoot, «Armenian Review», Vol. 30 N 2(118) Boston 1977, էջ 155

Խարբերդի առաջին բողոքական համայնքի քահանա է ձեռնադրվում Մարտիրոս Շմավոնյանը: Նա մեկն էր այն տղաներից, որոնք 8 տարի առաջ մեկնեցին Դիարբեքիրից Կ. Պոլիս, որպեսզի Բեբեկի վարժարանում ուսում ստանան: Իսկ երկրորդը Մեզիրեի համար՝ Մուրատ Մուրատխանյանը (1867)[21]:

Խարբերդի շրջակա քաղաքներում և գյուղերում նույնպես ժամանակի ընթացքում տարածվեց բողոքականությունը:

1850-ական թվականներին Խարբերդում հաստատված ամերիկացի միսիոներների ջանքերով Հյուսեյնիկում նույնպես կազմվեց առաջին բողոքական խմբակը, որն ուներ 10 անդամ: Հյուսեյնիկ ավանը գտնվում էր Խարբերդից մեկ մղոն հարավ: Փաստերոն Խարբերդի արվարձանն էր: 1860-ական թվականների վերջերին Հյուսեյնիկում հիմնվում է արական 150, ապա իգական 100 աշակերտ-աշակերտուհիներով դպրոցը:

Առաջին ամերիկացի միսիոներները Խարբերդի Խույլու գյուղ եկել են 1854-1855թթ.: Ամերիկացիները գյուղում հիմնում են դպրոց: Այստեղ կարելի է փաստել, որ ամերիկացի միսիոներներն ամեն տեղ այցելելով առաջինը հիմնում էին դպրոց, քանի որ նրանք տեսնում էին հայերի ձգտումը դեպի կրթություն, ինչպես նաև դպրոցներում անհամեմատ հեշտ էր քարոզներ կարդալ և շատ առարկաների հետ միասին քարոզվում էր բողոքականություն: Գյուղում բողոքական դպրոց բացվեց 1857թ.: Դպրոցը ստեղծվում է մի տան սենյակում: Այդպես կամաց-կամաց ժողովրդի մոտ հետաքրքրություն է արթնանում դեպի բողոքականությունը: Ցերեկային ժամերից բացի դպրոցը երեկոյան նույնպես կազմակերպում է դասընթացներ մեծահասակների համար, որի ընթացքում սովորեցնում է գրել, կարդալ և ընթերցվում էին հատվածներ Սուրբ Գրքից: Վերջապես 1861-1862թթ. կազմավորվում է բողոքական համայնք, հիմնում իր եկեղեցին և ձեռնադրում քահանա: Ավելի ուշ բողոքականները և լուսավորչականները իրար հետ հաշտվեցին: 1880թ. կառուցվեց երկհարկանի դպրոցի շենք: Վերևի հարկը հատկացվեց բարձր դասարաններում սովորող, իսկ առաջին հարկը՝ տարական դասարաններում սովորող տղաների համար: 1870թ. վերջերին գյուղի աղջիկների կրթությունը նունպես սկսեցին ամերիկացի միսիոներները: Առաջին մեկ երկու տարին աղջիկները և տղաները միասին էին հաճախում դպրոց: Շուտով 1882թ. բողոքական եկեղեցու բակում կառուցվում է աղջիկների համար առանձին երկհարկանի շենք[22]:

1866թ. Խարբերդից 9 մղոն արևմուտք գտնվող Բազմաշեն գյուղում հիմնվում է բողոքական առաջին համայնքը: Բացվեց նախակրթարան և ժողովարան[23]:

---

[21] Վահե Հ., Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը , Նյու Յորք 1959, էջ 591:
[22] Վահե Հ.,, Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը , Նյու Յորք 1959, էջ 804:
[23] Wheeler C. H. Ten years on the Euphrates. Pub American tract society. Boston 1868, էջ 122:

1870 - ականների կեսին Բազմաշեն հայկական գյուղը, ուներ 460-500 տուն: Բնակչության ճնշող մեծամասնությունը առաքելականներ էին: Կային նաև բողոքականներ և կաթոլիկներ: Բոլորն էլ ունեին իրենց եկեղեցիները[24]:

1860-ականների սկզբներին Խարբերդի Բարջանճ գյուղ մուտք գործեց բողոքականությունը: Գյուղի բողոքականները ունեին իրենց ժողովարանը և հոգևոր հովիվը: 1873թ. գյուղում բացվեց բողոքական վարժարան: Առաջին ուսուցիչը եղավ Մուշեղ Էսեքյանը: Այս վարժարան ավարտածներից շատերը մեկնում էին Խարբերդ և ընդունվում Եփրատ քոլեջ՝ իրենց ուսումը շարունակելու համար[25]:

Սուրսուր գյուղի մեջ ամերիկացի միսիոներները 1878թ. թվականին տուն գնեցին և ժողովարան կառուցեցին: Բողոքականները ստեղծեցին իրենց երկսեռ դպրոցը: Բայց հակասությունների արդյունքում այն երկար կյանք չունեցավ և շուտով փակվեց:

Խարբերդի վիլայեթում ամերիկացի միսիոներները բավականին հաջողությունների հասան, որի հիմնական պատճառը նրանց կողմից հիմնած դպրոցներն էին, ինչպես նաև «Եփրատ» քոլեջը, որտեղ բազմաթիվ հայեր սովորեցին:

---

[24] ՀԱԱ, Ֆ. 476, ց. 1. գ. 173, թ. 2:
[25] Ճիզմէճյան Մ., Խարբերդը եւ իր զավակները, Ֆրեզնո, Քալիֆորնիա 1955, էջ 114: